«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ՝ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ԱՌԱԿՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԵՆԹԱԹԵՄԱ՝ Ի՞ՆՉ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՐԵԼԻ Է ԻՐԱԿՆԱՑՆԵԼ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ ՈՐՊԵՍԶԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԵՋ ՀԱՎԱՏՔ ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼ:

ԱՌԱՐԿԱՆ՝ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏՈՂ ՈՒՍՈՒՑԻՉ՝ ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ՂԱԶԱՐԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....**3**

2. ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ԱՌԱԿՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.....6

3. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....**20**

4. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....**21**

5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....**22**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը: Մեր հետազոտական աշխատանքի արդիականությունը պայմանավորված է սովորողների կողմից մարդկային հարաբերությունների, բնության մեջ առկա լավ ու վատ երևույթների պատճառները ընդհանրացնելու, գաղափարը ձևակերպելու կարողության կարևորությամբ և այդ կարողության ձևավորման հարցում առակի հնարավորություններով:

Աստվածաշնչյան առակը դաստիարակչական նպատակ ունեցող ստեղծագործություն է և օգնում է դպրոցականին իրական կյանքում ճիշտ կողմնորոշվելու և ավելի հեշտ ապրելու:

Աստվածաշնչյան առակի ուսումնասիրման հարցը արդիական է, քանի որ մարդ արարածը կյանքի օրենքները սիրում է սովորել օրինակով, իսկ առակը տալիս է այդ հնարավորությունները. մարդու համար ընդօրինակելն ավելի հեշտ է, քան վերացական խրատը, ուստի հերոսների արարքներով բացահայտվում է ստեղծագործության գաղափարը, որն էլ նպաստում է աշակերտների՝ արդար, ազնիվ, ճշմարտախոս, աշխատասեր, քաջ, անվախ ու հայրենասեր մարդ դաստիարակվելուն: Մեր մանկավարժական աշխատանքի ընթացքում նկատել ենք, որ դասագրքերում այսօր այնքան էլ մեծ ու առանձնահատուկ տեղ չի տրվում աստվածաշնչյան առակներին, իսկ եղած առակներն էլ ուսումնասիրվում են՝ բավարարվելով նրանց բովանդակությունը վերարտադրելով: Առակն ինքնին, որպես այլաբանորեն ներկայացված գրական ստեղծագործություն, այնքան էլ լավ չի ընկալվում աշակերտների կողմից: Դա, համարելով արդի խնդիր, առաջարկում ենք առակները ուսումնասիրել այնպես, որ աշակերտները կարողանան հասկանալ առակի գաղափարը, կտահեն ենթատեքստը, տարբերեն լավն ու վատը, չարն ու բարին, ճիշտն ու սխալը և ըմբռնեն, թե ինչը պիտի լինի իրենց կյանքի ուղենիշը:

Հետազոտության նպատակն է՝ Աստվածաշնչյան առակների միջոցով դաստիարակել աշակերտների մեջ հավատքը: Առակի ուսուցումն առանձնահատուկ տեղ ու դեր ունի ՀԱԵՊ դասընթացում, քանզի անգնահատելի է առակի թե՛ ուսուցողական և թե՛ դաստիարակչական նշանակությունը: Առակներն այլաբանորեն, ոչ ուղղակի կերպով աշակերտ ընթերցողներին բարոյական խրատ են ուղղում՝ դաստիարակելով խոհեմություն, ազնվություն և արդարություն, աշխատասիրություն, համեստություն, սակավապետություն:

Հետազոտության խնդիրներն են՝

1. Բացահայտել աստվածաշնչյան առակների կիրառման հաճախականությունը տարրական դպրոցի հայ եկեղեցու պատմության դասագրքերում:

2. Մշակել և փորձարկել աստվածաշնչյան առակի ուսումնասիրման վերաբերյալ առաջադրանքների համակարգ:

3.Վերլուծել և գնահատել աստվածաշնչյան առակների ուսումնասիրման արդյունավետությունը փոխներգործուն մեթոդների ու արտադասարանային միջոցառումների կիրառման միջոցով:

Հետազոտության օբյեկտը՝ հայ եկեղեցու պատմության դասերին ընթերցված աստվածաշնչյան առակների գաղափարի ըմբռնման, յուրացման և կշռադատման մեթոդների համակարգն է:

Հետազոտության առարկան՝ աստվածաշնչյան առակի գաղափարի վերհանման մեթոդական գործընթացն է:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ԱՌԱԿՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հոգևոր դաստիարակությունը մանկական տարիքում շատ կարևոր է արժեքային համակարգի ձևավորման համար, մշակութային ժառանգությունը փոխանցելու համար: Սակայն այս կարևորությունը գիտակցելով հոգևոր ժառանգությունը փոխանցելու համար, երեխային քրիստոնյա մեծացնելու համար պետք է իմանալ երեխայի զարգացման առանձնահատկությունների մասին, հաշվի առնել առաջին հերթին նրա. – մտածողության, – երևակայության, – բարոյական ընկալումների զարգացման առանձնահատկությունները: Հոգևոր դաստիարակությունը փոխանցում է մեծապես բարոյական արժեքներ և իրականում դրա նպատակն է բարոյական արժեքների սերմանումն ու յուրացումը: Երեխաներն ավելի լավ ընկալում են մեր վարքն ու պահվածքը, քան մեր հրահանգներն ու խրատները: Այդ պատճառով այս տարիքում հոգևոր դաստիարակությունը պետք է իրականացվի ոչ առանձին և ոչ հատուկ պլանավորված: Եթե տանը լինի մանկական Աստվածաշունչ, նկարազարդումներով և երեխայի համար հասանելի, ապա այն հաստատ հետաքրքրություն կառաջացնի երեխայի մոտ: Ի վերջո պետք է հիշել, որ ավելի լավ է մտածել սեփական հոգևոր արժեքների մասին, մեր հոգևոր կյանքի մասին, նախքան երեխաների մեջ այդ արժեքները սերմանելու: Երեխաները կրկնօրինակում են մեր վարքը, և եթե մենք ապրում ենք բարոյական և քրիստոնեական արժեքների ներքո, ապա մեր երեխան կմեծանա որպես դրանց կրող մարդ: Ի վերջո հոգևոր դաստիարակությունը և հավատքը պետք չէ օգտագործել որպես վախի և դաստիարակության միջոց: Հոգևոր դաստիարակությունը ոչ թե մեզ սահմանափակելու և վախեցնելու համար է, այլ մեզ հույս, ուժ, բարություն, ձգտում և կյանքի իմաստավորում և արժևորում փոխանցող միջոց է: ԻՆՉ ԽՈՍՔ, երեխայի դաստիարակությունը հեշտ բան չէ: Սակայն, եթե ծնողը չի խրատում իր երեխային, երբ դրա կարիքը կա, նրա գործն ավելի է բարդանում: Ինչո՞ւ: Քանի որ առանց խրատի 1) երեխաները չեն սովորում լինել կարգապահ ու հնազանդ, ինչն էլ նյարդայնացնում և ուժասպառ է անում ծնողներին, և 2) երեխաները ստանում են անհետևողական դաստիարակություն, ինչն էլ շփոթության մեջ է գցում նրանց: Մյուս կողմից, սակայն, սիրով ու ողջամտությամբ տրված դաստիարակությունը կարող է շտկել երեխայի մտածելակերպն ու վարքը: Արդյունքում երեխաներն իրենց ապահով կզգան և կդառնան պատասխանատու անձնավորություն: Բայց որտե՞ղ կարող եք վստահելի առաջնորդություն գտնել ձեր երեխաներին լավ դաստիարակություն տալու համար: ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉՆ ԱՍՈՒՄ է: «Հիմարությունը կապված է երեխայի սրտին» (Առակներ 22:15): Թեև երեխաները կարող են լինել հասկացող ու բարի, սակայն նրանք հակված են անմտածված ու անխոհեմ արարքներ գործելու: Այդ պատճառով երեխաները խրատի կարիք ունեն (Առակներ 13:24): Այդ փաստը հասկանալը կօգնի ծնողին պատասխանատվությամբ կատարելու իր դերը: ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉՆ ԱՍՈՒՄ է: «Երեխայից խրատը հետ մի՛ պահիր» (Առակներ 23:13): Պետք չէ մտածել, թե հավասարակշռված դաստիարակությունը կվնասի ձեր երեխային, կամ թե նա հետագայում բացասաբար կտրամադրվի ձեր հանդեպ: Եթե երեխային խրատեք սեր ու

ջերմություն դրսևորելով, նա կսովորի հեշտությամբ ընդունել խրատը. մի բան, ինչը նրան անհրաժեշտ կլինի նաև չափահաս տարիքում (Եբրայեցիներ 12:11): ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉՆ ԱՍՈՒՄ Է: «Մարդ ինչ որ ցանի, այն էլ կհնձի» (Գաղատացիներ 6:7): Բնական է, որ ծնողները ցանկանում են պաշտպանել իրենց երեխաներին, և դրա մեջ ոչ մի սխալ բան չկա: Սակայն այս դեպքում նույնպես անհրաժեշտ է հավասարակշռություն դրսևորել: Իրականում, դուք ձեր երեխային օգնած չեք լինի, եթե ամեն անգամ նրան «փրկեք» իր գործած սխալ արարքների հետևանքներից կամ եթե փորձեք պաշտպանել երեխային, երբ ուսուցիչը կամ մեկ այլ անհատ ասում է, որ ձեր երեխան որևէ սխալ բան է արել: Այդ մարդկանց հանդեպ թշնամաբար տրամադրվելու փոխարեն՝ նրանց համարեք ձեր համագործակիցները: Այդպես վարվելով՝ կօգնեք երեխային հարգելու իշխանություն ունեցողներին, այդ թվում նաև ձեզ (Կողոսացիներ 3:20): Աշխարհում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական ու մշակութային փոփոխություններն ամենաանմիջական կերպով ազդում են մարդկային կյանքի տարբեր ոլորտների վրա: Ազգային դիմագիծը պահպանելու համար հարկավոր է զգուշորեն մոտենալ հոգևոր ու մշակութային ավանդույթներին, որոնց միջոցով հնարավոր է հասարակության մեջ կայունություն պահպանել և հաջող կերպով դիմակայել ժամանակակից մարտահրավերներին: Հասարակությունների առջև ծառացած խնդիրներին խելացի լուծումներ են տվել Եկեղեցու հայրերը: Ըստ նրանց՝ կարևորագույն խնդիր է մարդու մեջ աստվածնմանության պատկերի վերականգնումը, ըստ այդմ էլ՝ կրթության վերջնական նպատակը պետք է լինի Աստծո հետ միավորումը և մարդու աստվածացումը: Մեղսագործության ամենավտանգավոր հետևանքներից մեկն այն է, որ մարդու մեջ խաթարվեց աստվածային պատկերը և մարդու մեջ սկսվեց կատարվել այն, ինչի մասին Պողոս առաքյալն ասել է. «Բարին կամենում եմ անել, չեմ անում, այլ անում եմ չարը, որ չեմ կամենում անել» (Հռոմ. 7:19): Մարդը ծնվում է հավիտենության համար և որին հասնում է աստվածային ողորմածությամբ՝ հոգևոր կատարելագործման և աստվածճանաչողության ձգտման ուղին անցնելով:

21-րդ դարում անհատի հոգևոր զարգացումը դարձել է հրատապ խնդիր ազգային մշակույթի, ինքնության, արժեքային համակարգի ձևավորման համատեքստում; Աստվածաշնչյան առակը բանահյուսության հնագույն տեսակներից է և առկա է գրեթե բոլոր ժողովուրդների բանավոր ստեղծագործության մեջ: Այն զարգացել է հորինված հեքիաթների հիման վրա. այս առումով կարող ենք ասել, որ առակի ժանրն ու հեքիաթի ժանրը ունեն որոշ ընդհանրություններ:

Աստվածաշնչյան առակներում նկարագրվում են մարդկային բնավորության խտացված գծերը, մարդկանց արարքները, նրանց փոխհարաբերությունները, ծաղրվում են մարդկանց թերություններն ու բացերը, սակայն այդ բոլորը ներկայացված են այլաբանորեն, փոխաբերական ձևով՝ կենդանիների ու իրերի փոխհարաբերության միջոցով, և հենց այս այլաբանությունն է, որ բացահայտում է նրա առանձնահատկությունը,

Հնում «առակ» բառը նշանակել է նաև խրատ, իմաստություն: Այդպիսիք են Աստվածաշնչում պահպանված Սողոմոնի առակները, որոնք մեծ ազդեցություն են թողել գրեթե բոլոր ժողովուրդների մտածելակերպի վրա: Ներկայացնենք աստվածաշնչյան առակներից մի քանիսը:Օրինակ՝

Այրի կնոջ և դատավորի առակը:

Այս առակը դպրոցականներին սովորեցնում է, որ անդադար ու անձանձրույթ պետք է աղոթել Աստծուն, ով անտարակույս կլսի իրեն դիմողի աղոթքների ու աղաչանքները այլ ոչ թե անիրավ և անաստված դատավորին , ով լսեց այրի կնոջը միայն նրա համար, որ վերջինս արդեն ձանձրացնում էր իրեն: Այրին Քրիստոսին թողած՝ ապավինում էր անիրավ դատավորին՝ իրավունք էր խնդրում մեկ այլ դեպքից, որպեսզի ձերբազատվի մեկ այլ անիրավի բռնությունից:

Անիրավ տնտեսի առակը

Այս առակում տանուտերն Աստված է, տնտեսն էլ մարդն է: Աշխարհի բոլոր բարությունները Աստուծո ունեցվածքն են: Մարդը դրանց տերը չէ, այլ մատակարարող պաշտոնյան: Աստված աշխարհի բարությունները մարդուն է հանձնել, որ այս աշխարհում դրանք օգտագործելով՝ հանդերձյալ աշխարհի համար արդյունք և շահ պատրաստի: Աշխարհի բարիքները մարդու ձեռքում ժամանակավոր են: Մի օր դրանք այլևս ձեռքի տակ չպիտի ունենա: Աստված դրանք հանձնել է, որպեսզի նա որևէ ձևով օգտվի այդ բարիքներից, և երբ դրանք իր ձեռքից պակասեն, այսինքն՝ երբ մարդը մեռնի, իր ապագա կյանքում այս աշխարհի մատակարարությունից օգուտ քաղած լինի:

Ուշագրավ է նաև օգուտ քաղելու ձևը: Երբ տնտեսը մուրհակները փոխել էր տալիս, նա կարող էր օգտվել տարբերության գումարից՝ նույն պահին պարտապաններից պատշաճ մաս ստանալով, բայց տնտեսի նպատակն էր շահել միայն պարտապանների երախտապարտությունը, որպեսզի երբ պաշտոնից ազատվի, նրանց տներում բնակություն և կերակուր գտնի: Նա ցանկացավ ընկերներ ձեռք բերել՝ մարդկանց լավություն անելով, որ ընկերոջն արած լավությունից մի օր էլ ինքը օգտվեր: Առակի նպատակն է հասկացնել և ուսուցանել, թե մարդ պարտավոր է ձեռքում եղած աշխարհի բարիքներից ընկերոջը օգուտ հանել, օգնել, նպաստել, աղորմել:

«Աշխարհի որդիները» նրանք են, ովքեր ճարպիկ են ու խորամանկ և բոլոր գործերում իրենց շահն են փնտրում: Իսկ «լույսի որդիները» նրանք են, ովքեր Աստծուն սիրելով և հանդերձյալ կյանքի ձգտելով՝ չեն հոգում

երկրավորի մասին, այլ միայն հոգևոր հարստությունն են արժևորում: Սակայն առաջինները նույնպես կարող են փրկվել վերջինների նման, եթե իրենց անօրինությունը գիտակցեն ու ղզջան, եթե իրենց հանցանքները ընդունեն ու խոստովանեն, եթե ապաշխարեն ու փորձեն իրենց մեղքերը քավել՝ ներելով և ողորմություն անելով, քանզի «աղքատին ողորմություն տվողը փոխ է տալիս Աստծուն»:

Առակների նպատակը



Կարծում եմ, նա այդպես է իրականացնում մարդկանց նկատմամբ Եսայու մարգարեությունը, որ ասում է «Անդադար կլսեն, բայց չեն հասկանա, շարունակ կնայեն, բայց չեն տեսնի... Ուշագրավ է, որ Աստծու ներշնչմամբ գրված այդ խոսքերը սաղմոսերգուն ասել էր Հիսուսի ծնվելուց դարեր առաջ: Ստացվում է, որ իր Որդու երկիր գալուց դեռ հարյուրավոր տարիներ առաջ Աստված որոշել էր, որ նա ուսուցանելու է առակների միջոցով: Ուրեմն կարելի է ենթադրել, որ Աստված գնահատում է ուսուցանելու այս մեթոդը: Հիսուսը այնպես է սովորեցնում, որ նրանց համար հեշտ լինի հիշել: Սովորաբար տպավորիչ օրինակը կամ առակը չի մոռացվում: ինչպես Հիսուսն ինքն ասաց, առակները օգնում էին զատորոշելու նրանց, ում «սիրտը կարծրացել էր» ճշմարտության հանդեպ: Իսկ ինչպե՞ս էին նրա առակները բացահայտում մարդկանց մղումները: Որոշ դեպքերում նա միտումնավոր կերպով էր առակներով խոսում, որ մղի իր ունկնդիրներին հարցեր տալու դրանց լիարժեք նշանակությունը հասկանալու համար: Խոնարհ մարդիկ այդպես էլ անում էին, իսկ հպարտ կամ անտարբեր մարդիկ՝ ոչ: Փաստորեն, առակների միջոցով ճշմարտությունը հայտնի էր դառնում նրանց, ում սիրտը ծարավ էր ճշմարտության, սակայն թաքնված էր մնում նրանցից, ում սիրտը հպարտ էր: Հիսուսի առակներն ու օրինակները շատ առումներով էին օգտակար: Դրանք հետաքրքրություն էին առաջացնում մարդկանց մեջ՝ մղելով նրանց լսելու: Նաև պատկերներ էին ստեղծում մտքում, ինչի շնորհիվ հեշտ էր լինում հասկանալ:

Հավատի լույսը

Այս առակով Հիսուսը ուզում է մարդկանց սովորեցնել , որ կարևորը մարդու ներաշխարհն է, ոչ թե արտաքինը: Մարմնի ճրագն աչքն է. երբ քո աչքն առողջ է, քո ամբողջ մարմինը լուսավոր կլինի, իսկ երբ քո աչքը հիվանդ է, քո ամբողջ մարմինը խավար կլինի: Շատ անգամ մարդիկ տարված են արտաքին երևացող բաներ մաքրելով, մինչդեռ մեր ներսը լի է հափշտակությամբ և չարությամբ: Բայց երբ մարդը լսում է հավատում է Աստծո խոսքին, նրա մարմինը նմանվում է ճրագի, որն իրենից լույս է ճառագում, հետևաբար կարևորը մարդու հավատն է ու ներքին լույսը, այլ ոչ թե արտաքինը, որն շատ անգամ խավուսիկ է:

Նոր գինին հին տիկերի մեջ չի դրվում

Հիսուսի բերած համեմատությունների համաձայն՝ հին սովորությունները հնացած տիկերի են նման, իսկ Իր ուսմունքն ու քարոզները՝ նոր գինու: Հնի հետ դրանք անհարիր են, պետք է նոր գինին նոր տիկի մեջ լցնել, Նոր Ուխտը նոր օրենքներով կազմել, որպեսզի հաստատուն հիմքով պատրաստվի և պահպանվի:

Պահված գանձի օրինակը

Այստեղ շեշտը դրված է գանձի վրա, երբ հողագործը գտնում է այդ գանձը, նրա մոտ մեծ ցանկություն է առաջանում տիրանալ այդ գանձին՝ վաճառելով ամեն ինչ, ինչ որ ուներ: Ստացվում է, որ երկնային արքայությունը ժառանգելու համար պետք է հրաժարվել այս աշխարհում ունեցած հարստությունից: Ստացվում է , որ մարդը կարող է պատահաբար գտնել երկնքի արքայությունը և պետք է իմաստուն կերպով ընտրություն կատարել:

Նոր կարկատանը հին հագուստի վրա

Այստեղ մեկնաբանությունը նույնն է ինչ որ "Նոր գինին հին տիկերի մեջ չի դրվում " առակում: Հիսուսի բերած համեմատությունների համաձայն՝ հին սովորությունները հնացած հագուստի են նման, իսկ Իր ուսմունքն ու քարոզները՝ նոր կտորի: Հնի հետ դրանք համադրելը անհարիր է: Պետք է նոր Ուխտը նոր օրենքներով կազմել, որպեսզի հաստատուն հիմքով պատրաստվի և պահպանվի:

Ճրագի օրինակը

Կարծում եմ ճրագը դա քրիստոնեությունն է, որը չէր կարող երկար ժամանակ ծածուկ մնալ ու գաղտնի գործել, միայն թե այդ լույսը համարձակ դուրս բերող էր պետք:

Որոմի առակը

Ագարակատերը դա Հիսուսն է , իսկ ագարակը՝ աշխարհը: Ցորենի սերմերը բարի, իսկ որոմի սերմերը չար մարդիկ են: Բարի մարդկանց գործերը բարի պտուղներ են տալիս, չարերինը՝ չար: Ցորենն ու որոմն առանձնացնելը նշանակում է, որ ամեն մարդ իր գործերի համար արժանի հատուցում պետք է ստանա: Իսկ չար մարդիկ միանգամից չեն պատժվում, քանի որ այդ դեպքում հնարավոր է հեղություն կամ վիշտ պատճառել նաև բարի մարդկանց: Ու բացի այդ, յուրաքանչյուրին ժամանակ է տրվում զղջալու և ուղղվելու համար:

Աշակերտ լինելու գինը

Մարդկային կյանքը դա աշտարակի կառուցման նման է, որի հիմքը մարդու սերն է: Հիսուսին հետևելու իմաստը՝ փրկությունն է, որի համար անհրաժեշտ է սիրել Աստծուն ամբողջ հոգով ու մտքով: Եվ Հիսուսին հետևելուց առաջ մարդը պետք է հաշվի նստի ինքն իր հետ և հասկանա այն գինը, որ պիտի վճարի՝ հիսուսին աշակերտ լինելու համար:

Անպետք աղը

Աղը նյութի մեջ լուծվելիս նրա էությունն ու արտաքին տեսքը չի փոխում, այլ միայն իր համն է տալիս. նույնպես և քրիստոնեությունը մարդու կամ մարդկային հասարակության մեջ որևէ արտաքին բեկում չի առաջացնում, սակայն ազնվացնում է մարդու հոգին և դրա միջոցով փոփոխում նրա ամբողջ կյանքը: "Եթե աղը անհամանա" ասելով նա ի նկատի ուներ այն մարդկանց, ովքեր մեկ անգամ հաշակելով Սուրբ Հոգու հետ ազնիվ

հաղորդությունը, այնուհետև ընկան անհերելի մեղքի մեջ և նրանք այլևս առանց Աստծո առանձնակի օգնության ընդունակ չեն ոչնչով հոգեպես նորոգվել: Առակներն այժմ էլ պատմվում և պահպանվում են ժողովրդի մեջ: Այս առումով պետք է նշել, որ ուսուցումը լինելով բարդ գործընթաց, պահանջում է աշխատանք և հիշտ մոտեցում գործընթացի իրականացման համար: Ուսուցման գործընթացն իմացական գործունեության յուրահատուկ ձև է, քանի որ աշակերտը ուսուցման միջոցով յուրացնում է հասարակական փորձը, ճանաչում է աշխարհը: Ուսուցման տարբերությունը գիտական իմացությունից նրանում է, որ նյութը, որն արդեն յուրացված է գիտության կողմից՝ հատուկ կազմակերպված է և ներկայացված է ուսուցման համար:

Մի շարք առակներում երևում է հասարակական շերտավորումը և սոցիալական պայքարի առկայությունը: Մարդիկ դատում ու դատապարտում են

իշխաններին, տրտնջում թագավորներից, նույնիսկ՝ աստծուց: Սակայն հեղինակի կարծիքով, ժողովուրդը պետք է հնազանդվի իշխողներին, իսկ վերջիններս պարտավոր են նրան պահպանել օտար կեղեքիչներից ու վտանգից:

Սովորողի համակողմանի զարգացման հիմքը արժեքային համակարգի ձևավորումն է՝ ազգային և համամարդկային արժեքների գիտակցումը: Մանկավարժական արժեքաբանության կիրառական տեսանկյունից այս դրույթը արտացոլվում է,

հանրակրթության կրթական չափորոշիչներում, ուսումնական ծրագրերում, ուսումնական պլաններում, դասագրքերում, դիդակտիկ և մեթոդական նյութերում:Դպրոցը, հանդիսանալով անձի կրթության , դաստիարակության դարբնոցը, սերնդից սերունդ փոխանցում է հասարակության մեջ կուտակված նյութական, տնտեսական, սոցիալական

հոգեբանական, բարոյական, գեղագիտական ճանաչողական և այլ բնույթի արժեքներ: Սովորողի հոգեմտավոր ներաշխարհը ձևավորվում է ազգային և համամարդկային արժեքների գիտակցության ներքո, իսկ այդ արժեքներն ընկած են մարդասիրական կրթության հիմքում: Սովորողի ճանաչողական արժեքները ձևավորվում են գիտելիքի միջոցով . մտորել– գնահատել – իմաստավորել– յուրացնել ճանաչողական արժևորման տրամաբանական քայլերը սկսվում են գիտելիքի փոխանցմամբ: Հետևաբար, գիտելիքը համարվում է առաջնային արժեք կրթական արժևորման աստիճանակարգում: Անձի կրթվածություն ասելով՝ հասկանում ենք ոչ միայն գիտելիքների համակարգի տիրապետում, այլև ստեղծագործական ունակությունների դրսևորում, համագործակցային, ինքնաարտահայտման որակների առկայություն, արժեքայի գիտակցություն:

Փորձը ցույց է տալիս, որ աշակերտները մեծ հետաքրքրությամբ են կարդում աստվածաշնչյան առակներ. առակներում հանդես եկող տարբեր երևույթների միջոցով ակնարկվում են մարդիկ՝ իրենց դրական ու բացասական գծերով: Առակների միջոցով սովորողը նոր որակներ է ձեռք բերում . նա արդարացիորեն դիտարկում և վերլուծում է մարդկային տարբեր բնավորություններ, ինքնադատում բացասականը՝ չարությունը, ծուլությունը, ագահությունը, ժլատությունը և այլն:

Ի լրումն այս ամենի հոգևոր , բարոյական որակների ձեռքբերման առումով էլ ավելի ուժ ունեն Հիսուսի առակները, որոնք իրական կյանքից վերցված պատմություններ են: Դրանք Հիսուսի կողմից ավանդված բարոյականության յուրահատուկ դասեր են: Բարոյական, հոգևոր արժեքների փոխանցման յուրահատուկ աղբյուր է <<Մանկական աստվածաշունչը>> .Հիսուս առակներով խոսում է երեխայի հոգու հետ՝բարերարության, լույսի, մարդասիրության դասեր տալով:

Կրկնության դասը հնարավորություն է տալիս ուսուցչին ՝անդրադառնալու Հիսուսի առակներին և դրանց միջոցով սովորողների մոտ ձևավորելու նոր արժեքներ:

Առակների ուսուցման ժամանակ հարկավոր է ուսուցչի կողմից հստակ մեկնաբանվի յուրաքանչյուր միտքը իր արտահայտած իմաստով, քանզի այն կարող է

երբեմն ստանալ ոչ ճիշտ ընկալում, քանզի առակն ինքնին խոհախրատական և փիլիսոփայական միտք է իրենից ենթադրում:

Այսպիսով, մեր վարած դասերի, կատարած վերլուծությունների, դասալսումների արդյունքները ամբողջացնելու և ամբողջական պատկեր ստանալու նպատակով ուսուցիչների շրջանում անցկացրինք հարցախույզ: Կազմել ենք հարցաթերթիկ, որի նպատակն էր պարզել դպրոցում ինչպիսի աշխատանքներ են կատարվում առակների ուսումնասիրման շուրջ: Հարցաթերթիկը բաղկացած էր 6 հարցից, որից 2-ը փակ, 4-ը՝ բաց:

Ներկայացնենք հարցման արդյունքները.

1. Հետաքրքրա՞մ են արդյոք աշակերտները տարբերում առակը գեղարվեստական ստեղծագործության այլ ժանրերից:



Տրամագիր 1

Հարցախույզի մասնակից ուսուցիչների 55%-ը (11 ուս.) նշել է, որ աշակերտները հետաքրքրամբ են տարբերում առակը գեղարվեստական այլ ժանրերից, 35%-ը (7 ուս.) նշել է, որ հաճախ դժվարանում են, իսկ 10%-ը (2 ուս.) նշել է, որ աշակերտները չեն տարբերում առակները: Մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ աշակերտներն ավելի դժվար են առակը տարբերում այլ ժանրերից, երբեմն էլ չեն տարբերում, քանի որ բացի առակից շատ ստեղծագործություններ են ուսումնասիրում, սակայն ուսուցման գործընթացում դրանց ժանրային առանձնահատկությունների շուրջ բավարար աշխատանք չի տարվում և դասագրքերում բավարար նյութեր զետեղված չեն:

2. Հեշտությա՞մբ են արդյոք աշակերտները տարբերում առակը գեղարվեստական ստեղծագործության այլ ժանրերից:



Տրամագիր 1

Հարցախույզի մասնակից ուսուցիչների 55%-ը (11 ուս.) նշել է, որ աշակերտները հեշտությամբ են տարբերում առակը գեղարվեստական այլ ժանրերից, 35%-ը (7 ուս.) նշել է, որ հաճախ դժվարանում են, իսկ 10%-ը (2 ուս.) նշել է, որ աշակերտները չեն տարբերում առակները: Մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ աշակերտներն ավելի դժվար են առակը տարբերում այլ ժանրերից, երբեմն էլ չեն տարբերում, քանի որ բացի առակից շատ ստեղծագործություններ են ուսումնասիրում, սակայն ուսուցման գործընթացում դրանց ժանրային առանձնահատկությունների շուրջ բավարար աշխատանք չի տարվում և բավարար նյութեր զետեղված չեն:

3. Առակները վերլուծելիս աշակերտները դրա գաղափարը կապո՞ւմ են իրենց կյանքի ու առօրյայի հետ:



Տրամագիր 2

Այս հարցին ուսուցիչների 65%-ը (13 ուս.) պատասխանել է, որ աշակերտները առակների գաղափարը կապում են իրենց կյանքի ու առօրյայի հետ, այնինչ մեր մանկավարժական պրակտիկայի ընթացքում մենք մեր լսած դասերի արդյունքները վերլուծելիս պարզել ենք, որ ուսուցիչների պատասխանները արժանահավատ չէին: Մենք կարծում ենք, որ ոչ բոլոր աշակերտները կարող են շատ լավ ընկալել առակը և դրա դրվագները կապել կյանքի հետ, 15%-ը (3 ուս.) ճշել է, որ աշակերտներն ընդհանրապես առակների գաղափարը չեն կապում իրենց կյանքի հետ, 20%-ը (4 ուս.) ճշել է, որ աշակերտները երբեմն այդ առակի գաղափարը կապում են իրենց առօրյայի հետ: Հաշվի առնելով աշակերտների տարիքային առանձնահատկությունները՝ մենք կարծում ենք, որ եթե անգամ աշակերտը տարրական դպրոցում չի կարողանում առակի խորհուրդը կապել իր առօրյայի հետ, ամեն դեպքում նրա մտքում մտապատկերվում են դասագրքի նկարները, դրվագները, և նա հետագա իր կյանքում, անկասկած, կտեսնի նման դրվագներ և հետևություններ կանի:

4. Ի՞նչ մեթոդներ և մեթոդական հնարներ եք կիրառում առակի գաղափարի բացահայտման նպատակով:



Տրամագիր 3

Ուսուցիչների 35%-ը (7 ուս.) կիրառում է «Վենի դիագրամ», 30%-ը (6 ուս.) «Քառաբաժան», 20%-ը (4 ուս.) «Պրիզմա», 10%-ը (2 ուս.) «Մտագրոհ», 5%-ը (1 ուս.) դերային խաղ:

Մեր կարծիքով գրեթե բոլոր պատասխան տարբերակներն էլ նպատակային են կիրառել, սակայն մենք կարծում ենք, որ առակների ուսումնասիրության ժամանակ

առավել նպատակային են հատկապես «Պրիզման», «Վենի դիագրամը» և դերային խաղերը:

5. Առակը ուսուցման ո՞ր ձևերի օգնությամբ է դառնում հետաքրքիր ու ավելի հեշտ յուրացվող:

Հարցախույզին մասնակից ուսուցիչների 100%-ը (20 ուս.) կարծում է, որ առակի ուսուցման հեշտ յուրացմանը նպաստում է ուսուցման կազմակերպման հիմնական ձևը՝ դասը:

Սակայն մենք կարծում ենք, որ ուսուցման կազմակերպման մյուս ձևերը՝ արտադասարանային միջոցառումները, բեմականացումները, վիկտորինաները, դրանց հետ մեկտեղ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը ևս առավել հետաքրքիր, պատկերավոր ու ընկալելի են դարձնում առակի ուսումնասիրումը: 5.Առակի ուսումնասիրման ժամանակ ինչի՞ն են ավելի շատ ուշադրություն դարձնում սովորողները.



Տրամագիր 4

Հարցմանը մասնակցած ուսուցիչներից 45%-ի (9 ուս.) կարծիքով առակների ուսումնասիրման ժամանակ սովորողները ուշադրություն են դարձնում ամեն ինչին, 30%-ի (6 ուս.) կարծիքով՝ բովանդակությանը, իսկ 25%-ի (5 ուս.) կարծիքով սովորողները կենտրոնանում են այն բանի վրա, թե ովքեր կամ ինչերն են առակի հերոսները: Այս արդյունքները լավ նախադրյալ են առակի շուրջ բազմաշերտ

աշխատանք իրականացնելու, մասնավորապես՝ առակի կերպարները վերլուծելու համար:

6.Առակի հերոսների, նրանց արարքների և խոսքի վերլուծությանն առավելապես նպաստում է՝



Տրամագիր 5

Վերջին՝ վեցերորդ հարցին պատասխանելիս ուսուցիչների ՝ 25%-ը (5 ուս.) նշել է, որ առակի հերոսների գործունեության վերլուծությունը առավելապես նպաստում է սովորողների վերլուծական կարողության զարգացմանը, 30%-ի (6 ուս.) կարծիքով՝ սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը, իսկ մնացած 45%-ը (9 ուս.) կարծում է, որ զարգացնում է երկուսն էլ:

Այսպիսով, հարցախույզի արդյունքների վերլուծությունն օգնեց հասկանալ, որ աշակերտների վերլուծական մտածողության, ինչպես նաև սովորողների արժեքային համակարգի ձևավորման գործում օգնում է առակի հերոսների գործունեության քննարկումը:

Առակները սիրելի և գվարճալի են երեխաների համար, սակայն դրանց շուրջ տարվող աշխատանքը ոչ միշտ է համակարգված և նպատակաուղղված իրակա- նացվում՝ շեշտադրելով հատկապես սովորողների վերլուծական մտածողության զարգացումը: Հետևաբար, ոչ միայն կարևոր է դասագրքերում առակների ճիշտ և հանգամանորեն ընտրությունը, այլև բազմաշերտ վերլուծությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գիտամեթոդական գրականության ուսումնասիրումը, փորձնական դասերի վարումը, դասալսումների իրականացումը, ուսուցիչների շրջանում իրականացրած հարցախույզի արդյունքների վերլուծությունը հնարավորություն են տալիս կատարելու հետևյալ եզրակացությունները.

1. Առակի՝ որպես փոքրածավալ գրական ստեղծագործության գաղափարի բացահայտում, հիմք է հանդիսանում ավելի ծավալուն ստեղծագործությունների գաղափարի բացահայտման համար:
2. Կարևորելով առակի դերը գաղափարի բացահայտման գործում՝ գտնում ենք, որ դասագրքերում ներառված առակները բիչ են. մինչդեռ դրանք պետք է շատ լինեն, քանի որ առակն առավել դաստիարակչական նպատակ ունեցող ստեղծագործություն է և օգնում է մարդուն իրական կյանքում ճիշտ կողմնորոշվելու և ավելի ճիշտ ապրելու:
3. Առակի շուրջ իրականացվող բազմաբնույթ աշխատանքները, գաղափարի բացահայտման համար մեր կողմից մշակված և կիրառված առաջադրանքների համակարգը նպաստում են սովորողների վերլուծական – համադրական, քննադատա կան մտածողության, համեմատություններ, ընդհանրացումներ, եզրահանգումներ կատարելու, ստեղծագործական կարողությունների ձևավորմանն ու աշակերտների տրամաբանության զարգացմանը, առակի գաղափարի բացահայտմանն ու ենթատեքստի կռահմանը :
4. Մեր կողմից կիրառված ուսուցման կազմակերպման ձևերը, փոխներգործուն մեթոդներն ու մեթոդական հնարները նպաստեցին առակի գաղափարի վերհանման, առակի դերի ու նշանակության արժևորման, արդյունավետ ուսուցման ու աշակերտների տրամաբանության զարգացմանը:
5. Ուսումնասիրվող առակների գաղափարի բացահայտման աշխատանքները պետք է ունենան շարունակական բնույթ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մասնագիտական գրականության մեջ կարելի է մշակել և առաջարկել աստվածաշնչյան առակների ուսուցման արդյունավետությունը բարձրացնող նյութեր:

2. Սակավ են հատկապես աստվածաշնչյան առակների ուսումնասիրման ուղղությամբ մեթոդական գրականությունը, հոդվածները և համացանցային նյութերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գրիգորյան Գ., Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 1951, 595 էջ:
2. Դ դասարանների համար, Հայ կաթողիկե Պատրիարքարանի տպարան, 2018, 127 էջ:
3. Գյուլամիրյան Ջ. Հ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Եր., 2018, Զանգակ-97, 341 էջ:
4. Դեմիրճյան Դ., Երկ. ժողովածու, հ-8, Եր., ՀՀ ԳԱ հրատ., 1983, 670 էջ:
5. Թորոսյան Կ., Ջիբուխչյան Կ., Բալայան Ա., Ինչպես պլանավորել մայրենիի դասը 3, Մեթոդական ձեռնարկ, Եր., 2018, 512 էջ:
6. Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչ (1-9-րդ դասարաններ), 2011, 49 էջ:
7. Մանուկյան Ս.Պ., Ընդհանուր մանկավարժություն: Նոր դասընթաց: Ուսումնական ձեռնարկ: Եր., Զանգակ-97, 2005, 560 էջ:
8. Ջիբուխչյան Կ.Գեղարվեստական ստեղծագործության դժվարությունները և դրանց հաղթահարման ուղիները, Նախաճավիղ Եր., Լույս 4/2016:
9. Պետրոսյան Հ., Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ, Եր., «ԱՆ- ՋՈՆ», Լույս, 2008 275 էջ:
10. Ջրբաշյան Էդ., Գրականության տեսություն Եր., 1980, 496 էջ:
11. Սարգսյան Վ.Ա., Այբբենարան, Ե., Մանմար, 2019, 128 էջ:
12. Սիմոնյան Վ. Գրական տարրական գիտելիքները որպես կրտսեր դպրոցականի ընթերցողական կարողության ձևավորման հիմք, Եր., 2016, 181 էջ:
13. Տեր-Գրիգորյան Ա.Ե., Ընթերցանության մեթոդիկա, Եր.,Լույս, 1978, 246 էջ:
14. Выготский Л. С., Психология искусства, М., 1987, с.107.
15. Выготский Л.С. , Педогогическая психология,М., 1991 480 с.
16. Коменский Я. А., Локк Д., Руссо Ж.-Ж., Песталоцци И. Г., Педагогическое наследие. М.: Педагогика, 1989 г., 416 стр.